1843-1906. ԱՊՐԻԼ ԱՄ ԿԴ.-ԹԻՒ 4

# ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՄՍԱԳԻՐ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ




Բազմավէպի խմբագրութեան հետ թղթակցիլ ուզողները թող գրեն մեզ հետեւեալ հասցէիւ.

Rédaction de la Revue «BAZMAVEP»

St. Lazare VENISE (Italie)

digitised by A.R.A.R.@

# ՆՈՐ ԳՐՔԵՐ, ԱԶԴԵՐ, ԵՒ ԱՅԼՆ

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅ ՈՉ–ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

*Բոլոր ոչ–յեղափոխական ընկերութեանց մէջ յարաբերութիւն հաստատելու և ապագային նոյն իսկ պատգամաւորական ժողով գումարելու դիւրութիւն ընծայելու համար՝ Բարիզի հայ Աշխատ. Միութեան վարչական ժողովս կը խնդրէ բոլոր ոչ–յեղափոխական ազգային ընկերութեանց վարչական ժողովներէն՝ որ, եթէ կարելի է, մինչև երկու ամիս, բարեհաճին իրեն ղրկել իրենց պաշտօնական հասցէն և մէկ օրինակ կանոնագիր։*

*Վարչական ժողովս հրատարակութեան պիտի տայ իրեն հասած ընկերութեանց անուններն ու հասցէներն ի գիտութիւն բոլոր միւս ընկերութեանց, և պիտի ղրկէ ամենուն մէկ օրինակ իրեն կանոնագրէն։*

Միութեան հասցէն է Mr. le Président
de l'Union des Travailleurs Arméniens de
96 Bd. Picpus PARIS (*France*)

ԲԱՐԻԶԻ ՀԱՅ ԱՇԽԱՏ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

26 Յունվար 1906

## ԿԸ ԳՆԵՆՔ

*Հին տպագրուած գրքեր և լրագիրներ, որոնք կը պակսին մեր հաւաքածոյէն, և փոխադարձ՝ կը վաճառենք նոյնպիսի գրոց մեր կրկին օրինակները։*

*Հետևեալ գրքերը կրկին են մեր մատենադարանին մէջ, փափագողք կրնան ստանալ նշանակուած գներով. (ճանապարհի ծախսը գնողին վրայ)։*

Ֆր.

— *Տաղարան. Երաժշտական երգեցմունք հոգևորականք, փոքրադիր, բաղկացեալ* 720 *էջերէ. տպ. յԱմստէրդամ,* 1712 . . . . . . . 20

— *Տաղարան վայելուչ և գեղեցիկ ի զանազանս..., պատկերազարդ, տպ. ի Կ. Պոլիս, ի տպարանի Պետրոսեան Ստեփաննոսի.* 1788. . . . 16

— *Ճշմարիտ իմաստութեան կամ խոկմունք ոմանք... Թրգմ. յիտալ. բն. տպ. ի Կ. Պօլիս,* 1718 . . . . 10

— *Գիրք սաղմոսաց, տպագրեցեալ ի Հայրապ... պատկերազարդ, մեծատառ, չքեղատիպ. տպ. յԱմստերդամ,* 1714, *ընդ Տպարանում Ղուկասու Դպրի Վանանդեցւոյ* . . . . . 20

— *Բուն տոմար Հայոց և Հռովմայեցւոց, նաև պարզատոմար։ Ընդ որոց և Տաղ Յովհաննու Մանդակունւոյ։ Երազահան։ Եւ այլ բանք պիտանիք. պատկերազարդ. տպ. ի Կ. Պօլիս,* 1740. 20

— *Գրքուկս որ կոչի Տաղարան, Առացեալ ի զանազանից բանաստեղծիցն մերոց առաջնոց՝ ի խրախճանս մանկանց Եկեղեցւոյ, պատկերազարդ. տպ. ի Կ. Պօլիս,* 1740 . . . . 20

— *Գիրք աղօթից Գրիգորի Սկևռացւոյ.... տպ. ի Կ. Պօլիս,* 1742. *ի տպարանի Մահտեսի Աստուածատուրի* . . 14

— *Գիրք վայելուչ և հարկաւոր նամակաց այլևայլ... Պարզատոմար մշտ... տպագրեցեալ ի գործարանում սրբոյ Էջմիածնի, և սրբոյն Սարգսի զօրավարի, ի Մարսիլիա.* 1675. *Եւ Արհեստ համարողութեան* . . . . 15

— *Ճրագ ճշմարտութեան, Շարադրեալ ի Յակոբոս Պատրիարքէ ... տպ ի Կ. Պօլիս* . . . . . . 12

## ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

### ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

*Notre-Dame de Bitlis*, texte arménien, publié par Frédéric Macler, Paris, 1906.

*Ֆրէտէրիք Մաքլէր, հայագէտ գաղղիացին, որ ծանօթ է հայ հասարակութեան, Անահիտի և Բանասէրի ըրած աշխատակցութեամբ, ի լոյս կ'ընծայէ* 1702*ին գրուած փոքրիկ պատմութիւն մը՝ Բաղիշու Ս. Աստուածածին վանքին վրայ։ Սոյն գրութիւնը հանուած է Փարիզու ձեռագրաց հայկական յաւելուածի թիւ* 41*էն. ձեռագրին մէջ* 15 *էջ կը գրաւէ։ Բաղիշու ուխտատեղին, որուն հիմնադիր կը նշանակուի Թադէոս առաքեալ,* 1513*ին Սոֆի անուամբ Պարսիկէն կ'աւերի. քիչ յետոյ Ամիր Շարաֆ* (1524*ին*) *տիրեց երկրին, Ներսէս Վարդապետ՝ Հոճա Թումաճեանի գործակցութեամբ, վանքը նորոգեց։ Գրութեան մէջ տեղեկութիւններ կը տրուին վանքին կալուածոց և ժառանգութեանց վրայ։ Ֆր. Մաքլէր գաղղիերէն նախաբանին մէջ աշխարհագրական*

digitised by A.R.A.R.@

ակնարկ մը կը ձգէ Բաղէշ քաղաքին և Ս. Աստուածածին վանքին վրայ։

—=—

Համբարձում Առաքելեան «Մի ամիս Արեւելքում». Թիֆլիզ, 1904։ Գին՝ 40 կոպ։

Հ. Առաքելեան 1893ին ուղևորած է ի Կ. Պոլիս, յԵգիպտոս և յԵրուսաղէմ։ Եւ իր այս ուղևորութիւնն է, զոր կը պատմէ, այնքան տարի վերջ, 250 էջերու մէջ։ Ինչպէս իր տեսակի ամէն գրութիւն, սոյն մատենիկը հաճոյք և հետաքրքրութիւն կ'ազդէ, մանաւանդ երբ հայ հասարակութեան վրայ խօսելու առիթ կ'ունենայ։ Հեղինակն անհաճոյ տպաւորութիւններ ունեցած է յաճախ ի Կ. Պոլիս, գրական և դպրոցական հարցերով զբաղած պահուն. իր աննպաստ դատաստանը կազմած ժամանակ՝ իրողութեանց միայն ուշադիր եղած կ'երևի, բայց ոչ անոնց արդարացուցիչ պատճառներուն։

«Ես հաստատվեցի այն համոզմունքի մէջ, որ գոյացել է մեզանում, Կովկասում, Պոլսի հայ դպրոցների մասին... Գում-գափուի մայր-վարժարանը որ տարեկան ծախսում է 1000 ոսկի (10,000 րուբլի) ունի 24 ուսուցիչներ և 400 աշակերտներ երկու սեռից և 2 նախակրթարան, որտեղ աւանդվում են նաև քիմիա և ֆիզիկա, հազիւ կարողանայ հասնել մեր նախկին չորս դասարանական դպրոցին։

«Հարուստները իրանց զաւակներին տալիս են մի որ և է եւրոպական, կամ բողոքական Ռոպէրթեան ուսումնարանները և կամ ուղարկում են Եւրոպա։ Կայ և մի հայ դպրոց, որտեղ կրթվում է իգական սեռի հարուստ դասակարգը. այդ՝ Մէզբուրեան օրիորդական դպրոցն է։ Մի բան միայն աչքի է ընկնում Պոլսի Հայոց դըպրոցներում, գէթ իմ այցելած տեղերում. ասեղնագործութիւնը, գծագրութիւնը և նկարչութիւնը բաւական զարգացած են։ Իսկ Մէզբուրեան դպրոցը, որի մրցանակաբաշխութեան հանդիսին ներկայ գտնվեցի յուլիսի 6ին, և որտեղ առաջին անգամ ծանօթացայ Իզմիրլեան, Մուրատեան և Ալէաթճեան սրբազանների հետ, կատարելապէս ֆրանսական արիստոկրատիկական պանսիոնի է նման։ Այդ հանդիսին ներկայ էր Պոլսի հասարակութեան high-life. և այդ տեղից կարող էի լիուլի գաղափար կազմել Պոլսի քընքոյշ սեռի արդուզարդի, պճնասիրութեան, ու մօդայի մասին։ Ձիւնի պէս ճերմակ շորեր հագած, ծաղիկներով պճնուած աշակերտուհիները՝ ցոյց տուին հանդիսականներին՝ իրանց հմտութիւնը և ճարտարութիւնը՝ դաշնամուր ածելու, գողտրիկ երգեր երգելու, ֆրանսիական ոտանաւորների և կիսա-կասկածելի առակներ արտասանելու մէջ։

«Իսկ մամուլը... ճշմարիտ, քիչ էր մնացել մոռանայի այդ մամուլի գոյութիւնը, այնքան նա ողորմելի, թշուառ վիճակի մէջ է գտնվում, կամ ստեղծել է ինքն իր համար այդ վիճակը։...

«Ես կը նկարագրեմ իմ այցելութիւնը՝ հայ խմբագրութիւններից մինին։ Մտնում եմ մի կեղտոտ տուն. կեղտոտ, նեղ աստիճաններով բարձրանում եմ. խփում եմ մի դուռ և մտնում մի սենեակ, որի մէջ դրած կայ մի հին սեղան և մի աթոռ՝ խմբագիրը նստած. յայտնում եմ անունս, և խմբագիրը վեր կենալով՝ տալիս է ինձ իր աթոռը. բայց իր համար աթոռ չէ գըտնում ամբողջ խմբագրատան մէջ, և նստում է պատուհանի վրայ», և այլն։

—=—

Մարեօ Ֆալյօնէ (Պրոսպէր Մէրիմէի) Ս. Պետերսբուրգ, 1905։

Մէրիմէի այս վիպակը իրեն դիւցազն ունի Ֆալկոնէ Կորսիկացին. իր փոքրիկ տղան ժամացոյցի համար մատնութիւն մը կ'ընէ. հայրը կ'երթայ զինքն սպաննելու, բայց կը յորդորէ՝ աղօթք ընելով մեռնիլ. հակառակ անոր աղաչանքներուն, հրացանի գնտակը կ'ուղղէ որդւոյն դէմ և զայն գետին կը տապալէ. յետոյ կը բացագանչէ. «Իբրև քրիստոնեայ մեռաւ»։

Սոյն վիպակին լաւագոյն թարգմանութիւն մը արդէն կատարուած է Բազմավէպի մէջ. Ին. 1867, էջ 331 «Մատէոյ Ֆալգոնէ»։

—=—

*Inga Nalbandian* «Bolgesang» Kobenhavn 1905 (բանաստեղծութեանց հատորիկ մը)։

---


## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ

### «ՍԱՐՍՈՒՌՆԵՐ»

Վարուժան Դանիէլ, որուն մուտքը հայ գրականութեան մէջ այնքան համակրանօք ողջունուեցաւ գրագիտաց կողմէ, ի լոյս կ'ընծայէ իր բանաստեղծութեանց առաջին հատորիկը։

Սարսուռները զգացուած են երիտասարդ հոգիէ մը՝ ապագայի անորոշութեանց, բնութեան խորհուրդներուն, և մարդկային տառապանքին առջև։ Հայ ժողովուրդը, իր բրած ընդունելութեամբ, չի զլանար անշուշտ նորանոր թռիչներ ընծայել երիտասարդ քերթողին։

Դիմել հեղինակին.

M. Daniel Tchiouboukéar
Rue Metdepenningen, N. 15
GAND *(Belgique)*


---

## ՈՒՂՂԵԼԻՔ

Սխալ է Պոլսոյ մի քանի օրագրաց այն լուրը՝ (զոր արձագանգած էր նաև Բզմ. 1905, թիւ 12) թէ Եթովպիոյ փողերանոցի պետ ընտրուած ըլլայ Գ. Պօղոսեան. այս պատիւը կը պատկանի Յակոբ Մ. Պալտասարեանի, որուն ուրախակցութիւննիս կը յայտնենք։

digitised by A.R.A.R.@

# ԳԵՂՈՒՆԻ

## Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ

## ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒ

ԳԵՂՈՒՆԻՆ, *իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական և գրական բովանդակութեամբ սկսած է հրատարակուիլ, և ընդ փոյթ լոյս կը տեսնէ Վենետիկի Մխիթարեան Հարց տպարանէն: Կովկասահայ մեծ զանգուածը փութկոտօրէն սփոփեց արկածեալ Թրքահայը. հիմա ինքն է լացողը, ինքն է վիրաւորուածը, և ինքն է սովի և կրակի մատնուածը. այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կու տայ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ, ձեռնպահ չի մնար և Գեղունին, որ Կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաժին մ'ունի: Ս. Ղազար որոշած է* 1000 *օրինակ Գեղունի* (1906) *փութացնել Թիֆլիզի ի նպաստ կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին. ընդհանուր հայութեան այն ամէն անհատ որ տառապեալներու գանձանակին մէջ համեստ գումար մը –* 10 *ֆր. նետելու կարողութիւնն ունի, ցակալի է որ դիմէ այդ յանձնաժողովին ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ Նոր հրատարակելի Գեղունին, որուն կատարելութեան համար Թերթին մի և նոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք կը թափէ և աւելի եռանդով:*

*Գեղունին. այս անգամ՝ ևս ունի յայտարարութեանց բաժին, որուն մասնակցելու կը հրաւիրենք մեր նշանաւոր ամէն կարգի վաճառականները:*

*Գեղունիի բաժնեգինն է* 10 *ֆրանկ:*

*Գեղունիի համար լուսանկարներ, յայտարարութիւններ և նամակներ յղել մեր սովորական հասցէին.*

*Imprimerie Arménienne*

*St. LAZARE* — *VENISE*

*(Italie)*

**Յարգելի խմբագիրներէն կը խնդրենք հրատարակել յայտարարութիւնս:**

digitised by A.R.A.R.@

## Հ․ Ս․ ԵՐԵՄ

# “ՀԱՅ ՄԻՏՔԸ„

Հայ մտքի յատկանիշ բարոյական, ընկերական, հասարակական նշանաւոր բացատրութիւնները որ մեր մատենագիրներու գրութեանց մէջ ցանուցիր մնացած են եւ ծանօթ միայն ընթերցողներուն, հեղինակը յատուկ դասակարգութեամբ մը զանոնք քաղելով, կը դասաւորէ հատորիս մէջ, տալով կարեւոր մեկնութիւններ, բացատրութիւններ։ «Հայ Միտքը» իր տեսակէտին մէջ առաջինն է, հեղինակին նպատակն եղած է օգտակար ըլլալ ամէն ճառախօսի, յօդուածագրի եւ առհասարակ ամէն գրագէտի։ Անտարակոյս նշանաւոր հեղինակներու վկայութիւնները գրութեան մը զօրաւոր փաստաբաններն են, եւ այդ փաստաբանութեան համար ամենուն դիւրին չէր թափառիլ գրքերու մէջ եւ քաղել պէտք եղածը․ հեղինակը այդ ծառայութիւնը իր վրայ առնելով, կը յօրինէ հայ մտքերու այս ծաղկաքաղը, ուսկից մեր գրական ժիր մեղուները իրենց ազատ կամքովն կարող են ծծել օգտակարը ի նպաստ իրենց գրուածներուն։ Հեղինակը իր այս գործին համար կարդացած է մեր հին եւ նոր մատենագիրները, զանց առեր է ողջերն յարգելի պատճառով մը։

Գինն է թղթակազմ՝ ֆր. 3. —

Յատուկ լաթակազմ՝ ֆր. 4. —

*Դիմել Imprimerie Arménienne*

*St. Lazare* *VENISE (Italie)*

digitised by A.R.A.R.@

ԲԱՑՈՒԱԾ Է 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

# ԱՐՇԱԼՈՅՍ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

24 *պատկերազարդ յաւելուածներով, որ կանոնապէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ:*

*Թերթի ձգտումն է պետական սահմանադրական կարգ, կովկասեան ներքին լայն ինքնավարութիւն, տեղական զեմստվօ, զեմստվօյական մանր միութիւններ և ազատ կազմակերպում այդ մանր միութիւնների:*

*Հողի բաւարար բաժիններ սակաւահող գիւղացուն՝ պետական և կալուածական հողերից, և օրէնսդրական բաւարարութիւն բանւորի կենսական պահանջներին:*

*Ընտրական սկզբունքի լայն գործադրումը ընդհանրապէս, և մանաւանդ մեր դպրոցական գործի կազմակերպութեան, եկեղեցական կալուածների տնտեսութեան և հասարակական հիմնարկութիւնների ղեկավարութեան մէջ:*

*Թերթի գլխաւոր ուժը ուղղուած կը լինի հայ կեանքի պահանջներն առաջ մղելու և աշխատելու նրանց իրականացմանը դեմոկրատ ոգով:*

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ | ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ | | | |
|---|---|---|---|---|---|
| *Տարեկան* | 7 *ռ.* — — | 32 *ֆր.* | 28 *մարկ.* | 28 *շիլ.* | 7 *դոլ.* |
| *Վեց ամիսը* | 4 » — — | 20 » | 16 » | 16 » | 4 » |
| *Երեք ամիսը* | 2 » 25 *կ.* | 12 » | 10 » | 10 » | 2 » |
| *Մի ամիսը* | — — 72 » | 4 » | 3 » | 3 » | 2 » |

*Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս. Յունուար.* 4 *ռ. և յունիս.* 3 *ռ.:*

*Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում.*

*Կարելի է գրուել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա* № 11) *կամ գործակալների մօտ: Ուրիշ տեղերից դիմել՝*

Rédaction du Journal « Arschalouis »

Редакція газеты “ Аршалуйсъ „

ТИФЛИСЪ TIFLIS

*Խմբագիր-Հրատարակիչ՝* Գ. ՄԵԼԻՔ–ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ

digitised by A.R.A.R.@